ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 71-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի թիվ 01-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին բաժնի 5-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հրամայում եմ

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության ծառայողների վարքագծի կանոնագիրքը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ 11.10.2024թ.

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի 2024 թվականի
հոկտեմբերի 11-ի N 71-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության ծառայողների վարքագծի կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք) բխում է Հայաստանի Հանրապետության «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերից և հանդիսանում է հանրային ծառայության բարեվարքության համակարգի փարր: Կանոնագիրքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունում հանրային ծառայության բարեվարքության համակարգից բխող հարաբերությունները, և հանդիսանում է Փրկարար ծառայության բարեվարքության համակարգի փարր: Փրկարար ծառայության բարեվարքության համակարգի փարրեր են նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի, «Փրկարար ծառայության մասին» օրենքի, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի, Փրկարարական ծառայության կանոնագրքի, Փրկարար ծառայության աշխատանքային ներքին կարգապահական կանոնների և փրկարարական ծառայողի պաշտոնի անձնագրի նորմերը, որոնք սահմանում են վարքագծի կանոններ:

ԲԱԺԻՆ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կանոնագրքով սահմանված են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ծառայողների վարքագծի սկզբունքները և կանոնները:

2. Վարքագծի սկզբունքները «Հանրային ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով սահմանված էթիկական սկզբունքներ են.

1) հանրությանը ծառայելու գիտակցումը,

2) հավասարությունը հանրային շահին,

3) բարեկրթությունը և հարգալիրությունը,

4) բարեխղճությունը,

5) օբյեկտիվությունը:

3. Վարքագծի կանոնները բխում են վարքագծի սկզբունքներից, որոնք միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են:

4. Կանոնագրքի նպատակներն են.

1) Ծառայության նկատմամբ հանրության վստահության ամրապնդումը,

2) Ծառայության ծառայողների (այսուհետ՝ Ծառայողներ) բարեվարք վարքագծի ձևավորումը,

3) Ծառայությունում կոռուպցիայի նկատմամբ զգոնության և անհանդուրժողականության ամրապնդումը, կոռուպցիայի կանխարգելումը:

5. Կանոնագիրքը ներառում է վարքագծի կանոնների պարտադիր և խրախուսելի նորմեր: Կանոնագրքի պարտադիր կանոնները որոշակի վարքագիծ դրսևորելու կամ դրան հետևելու պարտադիր բնույթ ունեցող նորմերի համախումբ է: Այդ նորմերի խախտումը հանգեցնում է կարգահապական պատասխանատվության՝ Փրկարար ծառայության մասին օրենքով սահմանված կարգով:

6. Կանոնագրքի խրախուսելի կանոնները օրինակելի կանոնների համախումբ է, որոնց հետևելը հայեցողական բնույթ ունի և ուղղված է Ծառայության համակարգում Ծառայողների գերազանց վարքագծի ապահովմանը: Ծառայողների վարքագծի համապատասխանեցումը խրախուսելի կանոններին ցանկալի է, այլ ոչ պարտադիր:

7. Կանոնագրքի նորմերը պետք է մեկնաբանվեն ու կիրառվեն Կանոնագրքի նախաբանին, Կանոնագրքի նպատակին ու առարկային համահունչ՝ հաշվի առնելով ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության արժեհամակարգը:

8. Կանոնագրքի նորմերի մեկնաբանությունները չպետք է հակասեն «Հանրային ծառայության մասին», «Փրկարար ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներում, Փրկարարական ծառայության կանոնագրքում, Փրկարար ծառայության աշխատանքային ներքին կարգապահական կանոններում նույնանման հարաբերություններ կարգավորող նորմերի իրավական բովանդակությանը:

9. Ծառայողներն իրավունք ունեն ցանկացած ժամանակ, անկախ որևէ վարույթի կամ քննության հարուցված լինելու հանգամանքից, դիմել ՆԳՆ բարեվարքության հարցերով կազմակերպչին՝ հանրային ծառայության, Ծառայության բարեվարքության համակարգերի, սույն Կանոնագրքի նորմերի վերաբերյալ խորհրդատվություն ու պարզաբանումներ ստանալու նպատակով:

10. Կանոնագրքում գործածվող հիմնական հասկացություններն են.

1) **բարեվարքություն**՝ ընդհանուր էթիկական արժեքներին, սկզբունքներին և նորմերին համապատասխան գործունեություն և դրանց պահպանում, որի նպատակն է ամրապնդել մասնավոր շահերի նկատմամբ հանրային շահի գերակայությունը և պաշտպանությունը պետական համակարգում.

2) **Ծառայության հրամանատարներ (պետեր)**՝ Ծառայության տնօրեն, տնօրենի տեղակալներ, վարչությունների պետեր, ակադեմիայի ռեկտոր, ինչպես նաև Փրկարարական ծառայության այլ ստորաբաժանումների և այդ ստորաբաժանումների կազմի մեջ մտնող կառուցվածքային միավորների հրամանատարներ (պետեր), նրանց տեղակալներ.

3) **նվեր**՝ ցանկացած գույքային առավելություն, այդ թվում՝ ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, անհատույց հանձնված կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, դրամական միջոցները (կանխիկ, անկանխիկ կամ որևէ այլ ձևով արտահայտված), կրիպտոարժույթը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողություններ, որոնց հետևանքով անձը ստանում է օգուտ կամ առավելություն, և որը տրամադրվում է պայմանավորված անձի (այդ թվում՝ նաև փոխկապակցված անձի) պաշտոն զբաղեցնելու հանգամանքով:

4) **հանրային շահ՝** սահմանադրական արժեք, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել: Հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար: Հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը:

5) **մասնավոր շահ՝** ներառում է որևէ արտոնություն տվյալ անձին կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ տվյալ անձը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ:

6) **փոխկապակցած անձ՝** «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված անձինք:

7) **սեռական ոտնձգություն**՝ սեռական բնույթի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, նվաստացուցիչ, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը.

8) **հանրային ռեսուրսներ՝** ծառայողական պարտականությունների իրականացման համար նախատեսված նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցներ, մարդկային ռեսուրսներ, աշխատաժամանակ.

9) **Բարեվարքության հարցերով կազմակերպիչ՝** ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության բարեվարքության հարցերով հանրային ծառայության պաշտոնատար անձ, ում լիազորությունները սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 46-րդ հոդվածում:

11. Կանոնագրքի կանոնները շարադրված են 7 բաժիններում և 14 գլուխներում: Բաժին 1-ում ներկայացված են ընդհանուր բնույթի նորմեր: Բաժին 2-ում, 3-ում, 4-ում, 5-ում և 6-ում սահմանված են վարքագծի պարտադիր կանոններ: Այդ բաժիններից յուրաքանչյուրը բխում է կանոն 3-ում սահմանված վարքագծի սկզբունքից: Բաժին 7-ում սահմանված են խրախուսական նորմեր:

ԲԱԺԻՆ 2

ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԳԻՏԱԿՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 1

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

12. Ծառայողն իր լիազորություններն իրականացնում է օրենքի գերակայության սկզբունքի հիման վրա՝ իրավունքի գերակայության առաջնորդությամբ:

13. Ծառայողը պարտավոր է հարգել ու պահպանել Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, սահմանադրական օրենքները, օրենքները, Ծառայության մասին օրենսդրությունը, սույն Կանոնագիրքը, իրավական այլ ակտերը, և գործել դրանց համապատասխան:

14. Ծառայողը պարտավոր է հարգել ու պահպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը՝ մարդասիրության սկզբունքի պահպանմամբ:

15. Ծառայողը պարտավոր է չչարաշահել ու չգերազանցել իր պաշտոնեական լիազորությունները՝ չտալ Սահմանադրությանը և օրենքներին հակասող կամ իր կամ կատարողի լիազորությունների շրջանակից դուրս հրամաններ, հրահանգներ կամ կարգադրություններ, բանավոր կամ գրավոր, ինչպես նաև՝ հանձնարարություններ, որոնց կատարումը կհանգեցնի մարդու իրավունքների կամ օրինական շահերի խախտմանը կամ Ծառայության հեղինակազրկմանը:

16. Ծառայողին արգելվում է դրսևորել այնպիսի վարքագիծ, որը հանդիսանում է կամ կարող է ընկալվել որպես հակաօրինական գործունեություն (գործողություն կամ անգործություն) կամ դրա խրախուսում կամ դրա նկատմամբ հանդուրժողականություն կամ անհարգալից վերաբերմունքի դրսևորում օրինավոր վարքագծի նկատմամբ:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՆՈՆՆԵՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ (ՊԵՏԵՐԻ) ՀԱՄԱՐ

17. Ծառայության ստորաբաժանման պետը (հրամանատարը) ղեկավար է և պատասխանատու է իրեն վստահված ստորաբաժանման ծառայողների բարեվարքության, ծառայողական կարգապահության, բարոյահոգեբանական վիճակի, ներքին կարգ ու կանոնի համար:

18. Հրամանատարը (պետը) պարտավոր է անձամբ պահպանել Կանոնագրքի սկզբունքները և կանոնները՝ իր անձնական օրինակով վստահություն սերմանելով ենթակաների մոտ Ծառայության բարեվարքության համակարգի նկատմամբ:

19. Հրամանատարը (պետը) պարտավոր է հետևողական կերպով կենսագործել պետական քաղաքականությունը, քաջատեղյակ լինել Ծառայության վերաբերյալ պետական ծրագրերից, օրենսդրությունից ու այլ իրավական ակտերից, մշտապես կատարելագործել իր մասնագիտական գիտելիքները, հմտությունները և փորձը:

20. Հրամանատարը (պետը) պարտավոր է ենթակաների մեջ զարգացնել ծառայողական պարտքի կատարման համար անհրաժեշտ հատկանիշներ, ծառայողական երդման անխախտելիության գիտակցություն, խիզախություն, զգոնություն, ծառայողական ընկերություն, փոխօգնության ձգտում:

21. Հրամանատարը (պետը) պարտավոր է հարգել իր ենթակաների արժանապատվությունը, նրանց նկատմամբ լինել հարգալիր ու ուշադիր, ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ենթականերին զերծ պահել ոչ հիմնավոր, անօրինական գործողություններ կատարելուց կամ որոշումներ կայացնելուց:

22. Հրամանատարը (պետը) պարտավոր է չտալ Սահմանադրությանը և օրենքներին հակասող, իր կամ ենթակայի լիազորությունների շրջանակներից դուրս հրամաններ ու կարգադրություններ: Նմանապես, հրամանատարը (պետը) պետք է զերծ մնա ենթակաների նկատմամբ վերադասի իր լիազորությունների չարաշահումից:

23. Հրամանատարը (պետը) չի օգտագործում իր պաշտոնեական դիրքը կամ վերադասի լիազորությունները՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձանց, այլ անձանց կամ

կազմակերպությունների համար օրենքով չսահմանված արտոնություններ, նպաստավոր պայմաններ ստեղծելու կամ դրանց ստեղծմանը որևէ կերպ աջակցելու նպատակով:

24. Հրամանատարը (պետը) պարտավոր է իր ենթակաների կողմից կոռուպցիոն բնույթի գործողությունների և այլ խախտումների վերաբերյալ հաղորդումներ ստանալու դեպքում ձեռնարկել օրենքով սահմանված ու գործուն քայլեր՝ դրանց առնչությամբ հետագա գործողությունների ընթացքն ապահովելու համար:

25. Հրամանատարը (պետը) պարտավոր է կիրառել ջանքեր իր ենթակաների շրջանում Ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, սույն Կանոնագրքի, հանրային բարեվարքության սկզբունքների մասին իրազեկվածության բարձրացման ուղղությամբ:

26. Հրամանատարը (պետը) և իրավասու պաշտոնատար անձինք պարտավոր են օրենքով սահմանված կարգով ընթացքավորել և արձագանքել ծառայողի կողմից ներկայացված դիմումներին ու բարձրաձայնած խնդիրներին:

ԲԱԺԻՆ 3
ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻՆ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 3
ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻՆ

27. Ծառայողն իրականացնում է իր ծառայողական լիազորությունները հանրությանը ու հանրային շահին առավելագույն ջանասիրությամբ ծառայելու, մարդկանց կյանքի և առողջության պահպանման, նրանց իրավունքների ու ազատությունների ապահովման գերակա նպատակներով:

28. Ծառայողի կողմից իր լիազորությունների կատարումը և իրավունքներից օգտվելը չպետք է վնաս հասցնի հասարակությանը, հանրային շահին, այլոց իրավունքներին ու ազատություններին, Ծառայության գործունեությանը:

29. Ծառայողը չպետք է դրսևորի այնպիսի վարքագիծ կամ պահվածք, որ կասկածի տակ դնի իր ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարումը, խաթարի հանրային վստահությունը Ծառայության նկատմամբ:

30. Ծառայողը իր լիազորութուններն իրականացնելիս, ու հատկապես արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ, ցուցաբերում է զգայունություն

հասարակության բոլոր անդամերի, հատկապես՝ ծերերի, կանանց, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, այլ խոցելի խմբերի նկատմամբ:

31. Ծառայողը ցուցաբերում է աջակցություն Ծառայություն դիմած անձանց, հատկապես խոցելի խմբերին՝ օգնելու նրանց իրացնել իրենց իրավունքներն ու ազատությունները, որոնք երաշխավորված են Սահմանադրությամբ, օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով:

32. Ծառայողը հետևողականորեն կիրառում է Ծառայության մասին պետական քաղաքականությունները, ծրագրերը, օրենսդրական և այլ իրավական ակտերը, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված որոշումները և կազմակերպահիրավական բնույթի այլ իրավական ակտերը՝ անկախ անձնական համոզմունքներից ու հայացքներից:

33. Ծառայողը պարտավոր է չօգտագործել զբաղեցրած պաշտոնն իր, այլ անձանց կամ մասնավոր կազմակերպությունների համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար, որոնք բոլոր դեպքերում վնասում են Ծառայության հեղինակությունը, նպաստում են Ծառայության համակարգի խոցելիությանը:

ԳԼՈՒԽ 4
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

34. Ծառայողն իր լիազորություններն իրականացնելիս ապահովում է իր որոշումների և գործողությունների թափանցիկությունը և հաշվետվողականությունը՝ բացառությամբ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

35. Հանրային իշխանության այլ մարմինների, Ծառայության տարբեր ստորաբաժանումների հետ համագործակցելիս և իր գործողությունները նրանց հետ համակարգելիս, Ծառայողը պարտավոր է գործել թափանցիկ՝ պատշաճ կերպով արձագանքելով այդ մարմիններին ու տրամադրելով նրանց անհրաժեշտ տեղեկատվություն:

36. Ծառայողը պարտավոր է կիրառել ջանքեր, որ բացառվի չճշտված, իրականությանը չհամապատասխանող, ապակողմնորոշող տեղեկատվության տրամադրումը հանրային իշխանության մարմիններին, լրատվամիջոցներին, հասարակությանը:

37. Ծառայողը կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված հարցումներին ի պատասխան օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հանձնաժողովին ներկայացնում է պարզաբանումներ և լրացուցիչ նյութեր՝ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի ստուգման և վերլուծության նպատակով:

38. Ծառայողը օրենքով սահմանված դեպքերում ապահովում է հանրության ներկայացուցիչների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում՝ նրանց մասնակցության և լսված լինելու իրավունքներն ապահովելու նպատակով:

ԳԼՈՒԽ 5
ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

39. Շահերի բախումն իրավիճակ է, երբ Ծառայողի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել նրա լիազորությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Այդ իմաստով Ծառայողն իր լիազորություններն իրականացնելիս պետք է խուսափի այնպիսի գործողության (անգործության) կատարումից կամ որոշման ընդունումից, որի վրա ազդում են կամ կարող են ազդել սույն կանոնագրքով սահմանված մասնավոր շահը:

40. Ծառայողին արգելվում է օգտագործել պաշտոնեական լիազորությունները կամ ծառայողական դիրքը՝ իր, իր հետ փոխկապակցված անձանց, այլ անձանց կամ կազմակերպությունների համար օրենսդրությամբ չսահմանված արտոնություններ, բացառություններ, նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու կամ դրանց ստեղծմանն աջակցելու նպատակով:

41. Ծառայողը պարտավոր է իր լիազորությունները կատարելիս խուսափել այնպիսի հարաբերություններից, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել շահերի բախում կամ որոնց առկայության պայմաններում Ծառայողը հնարավորություն չի ունենա անաչառ և անկողմնակալ կատարելու իր պաշտոնեական, ծառայողական լիազորությունները:

42. Ծառայողը պարտավոր է խուսափել այնպիսի գործառույթներ ստանձնելուց, որոնց իրականացման ընթացքում կանխատեսելի կլինեն հաճախակի շահերի բախման իրավիճակներ:

43. Ծառայողը պարտավոր է հրաժարվել ոչ օբյեկտիվ երաշխավորություններ կամ միջնորդություններ տալուց՝ այլ անձին հանրային ծառայության պաշտոնի նշանակելու, առաջխաղացման, պաշտոնեական կարգավիճակի բարելավման համար, ինչպես նաև չդրդել որևէ մեկին նման երաշխավորություններ տալ կամ միջնորդություններ անել:

44. Բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի՝ Ծառայողը պարտավոր է չընդունել, չպահանջել կամ չխրախուսել արտոնյալ վերաբերմունք հանրային իշխանության այլ մարմինների և այլ պաշտոնատար անձանց հետ հարաբերություններում՝ կապված իր պաշտոնեական (ծառայողական) կարգավիճակի հետ, և զերծ մնալ արտոնյալ վերաբերմունք դրսևորելուց որևէ մեկի նկատմամբ՝ պայմանավորված հանրային ծառայությունում այդ անձի զբաղեցրած պաշտոնով, քաղաքական հայացքներով:

45. Եթե Ծառայողի կողմից գործողության (անգործության) կատարումը կամ որոշման ընդունումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել շահերի բախման, Ծառայողն իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս անձ կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնում է գրավոր

հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին: Նախքան վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի գրավոր հանձնարարություն կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից առաջարկություն ստանալը՝ Ծառայողը պարտավոր է զերծ մնալ հարցի վերաբերյալ որևէ գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասում:

46. Շահերի բախման վերաբերյալ անհրաժեշտ խորհրդատվություն ու պարզաբանում ստանալու համար, մինչև 45-րդ կանոնով սահմանված քայլերին դիմելը, կամ դրանից հետո, Ծառայողը կարող է դիմել ՆԳՆ բարեվարքության հարցերով կազմակերպչին:

47. Ծառայողը պարտավոր է հետևել հանրային ծառայության անհամատեղելիության պահանջներին՝ ըստ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի և Փրկարար ծառայության մասին օրենքի 39-րդ հոդվածի հիմքերի:

ԳԼՈՒԽ 6
ՆՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

48. Ծառայողը չպետք է ընդունի նվեր կամ հետագայում նվեր ընդունելու համաձայնություն տա, եթե նվերը տրվել է կամ տրվելու է իր պաշտոնեական, ծառայողական լիազորությունների իրականացման հետ կապված (անթույլատրելի նվեր):

49. Ծառայողին թույլատրվում է ընդունել միայն այնպիսի նվերներ, որոնք սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասում (թույլատրելի նվեր):

50. Ծառայողը պարտավոր է զերծ մնալ ոչ նյութական առավելություն ընդունելուց, եթե կարող է ընկալվել, որ դա կարող է ազդել իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա: Ոչ նյութական առավելություն կարող է լինել, օրինակ, արտոնյալ դիրքը կամ բարիքներից արագ օգտվելու հնարավորությունը, ինչի դեպքում դրանց դրամական արժեքն ակնհայտ չէ:

51. Ծառայողը պարտավոր է բոլոր դեպքերում, բացառությամբ՝ սահմանված շեմը չգերազանցող արժեք ունեցող թույլատրելի նվերների, վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել ստացված նվերի, այդ թվում՝ ոչ նյութական առավելության մասին:

52. Ծառայողը պետք է միջոցներ ձեռնարկի, որ իր ընտանիքի անդամները և իր հետ փոխկապակցված այլ անձինք չընդունեն նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն չհայտնեն, եթե առկա է հնարավոր կամ իրական կապ Ծառայողի ծառայողական պարտականությունների կատարման և ստացված նվերի միջև:

53. Եթե «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված նվերի արժեքը (բացառությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է վաթսուն հազար դրամը, ծառայողը պարտավոր է սահմանված կարգով հաշվառել այն նվերների հաշվառման ռեեստրում և հանձնել պետությանը՝ հաշվի առնելով, որ նվերը համարվում է պետական կամ համայնքային սեփականություն:

54. Եթե Ծառայողը ստացել է նվեր, որը Ծառայողի կարծիքով անթույլատրելի նվեր է, պարտավոր է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում այդ մասին հայտնել ՆԳՆ բարեվարքության հարցերով կազմակերպչին՝ տասնհինգօրյա ժամկետում խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե ՆԳՆ բարեվարքության հարցերով կազմակերպչի խորհրդատվական կարծիքի համաձայն նվերը թույլատրելի չի համարվում, ապա Ծառայողը պարտավոր է կարծիքը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում վերադարձնել նվերը կամ վճարել դրան համարժեք հատուցում: Եթե նվերը վերադարձնելը կամ համարժեք հատուցում վճարելը հնարավոր չէ, ապա Ծառայողը պարտավոր է սահմանված կարգով նվերը հանձնել:

55. Եթե Ծառայողին հայտնի է դառնում, որ իր ընտանիքի անդամները կամ իր հետ փոխկապակցված անձինք ստացել են անթույլատրելի նվեր, նա պարտավոր է ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում այդ մասին հայտնել ՆԳՆ բարեվարքության հարցերով կազմակերպչին՝ տասնհինգօրյա ժամկետում խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե բարեվարքության հարցերով կազմակերպչի խորհրդատվական կարծիքի համաձայն, նվերը թույլատրելի չի համարվում, Ծառայողը պարտավոր է խորհրդատվական կարծիքը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում վերադարձնել նվերը կամ վճարել դրան համարժեք հատուցում:

ԲԱԺԻՆ 4
ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ և ՀԱՐԳԱԼԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 7
ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

56. Ծառայողը դրսևորում է բարեկրթություն, հարգանք ու քաղաքավարություն այլ անձանց հետ հաղորդակցվելիս՝ ծառայողական լիազորություններն իրականացնելու ընթացքում, ինչպես նաև մասնավոր, անձնական հարաբերություններում և միջավայրում:

57. Միմյանց դիմելիս Ծառայողները պարտավոր են պահպանել Փրկարարական ծառայության կանոնագրքի 24-րդ հոդվածով սահմանված և Փրկարար ծառայության աշխատանքային ներքին կարգապահական կանոններում ամրագրված ծառայողական բարեկրթության համապատասխան նորմերը:

58. Ծառայողը պարտավոր է գործընկերների հետ հարաբերություններում դրսևորել նրբանկատություն, չբարձրացնել ձայնն աշխատավայրում, գործընկերոջ վերաբերյալ քննադատություն արտահայտել միայն նրա ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը:

59. Ծառայողը պարտավոր է գործընկերների և պետական այլ մարմինների աշխատակիցների հետ հաղորդակցվելիս լինել նրբանկատ, զուսպ, հարգալից, բարեկիրթ, չխոչընդոտել այլ հանրային ծառայողների աշխատանքային պարտականությունների կատարմանը:

60. Հանրային ծառայողը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, պարտավոր է չգործադրել ֆիզիկական ուժ կամ դրա վերաբերյալ սպառնալիք չներկայացնել, ինչպես նաև չգործադրել հոգեբանական բռնություն և այլ սպառնալիքներ չներկայացնել:

61. Իր լիազորություններն իրականացնելիս՝ Ծառայողը պարտավոր է հաղորդակցվել գրական հայերենով՝ բացառելով ժարգոնային կամ քրեական ենթամշակույթին բնորոշ բառապաշարի կիրառումը:

62. Ծառայողը պարտավոր է պահպանել համազգեստի կրման վերաբերյալ Ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված պահանջները, իսկ առանց համազգեստի ներկայանալիս՝ ունենալ պատշաճ, կոկիկ և ներկայացուցչական տեսք:

63. Ծառայողը պարտավոր է զերծ մնալ արտոնյալ վերաբերմունք դրսևորելուց որևէ մեկի նկատմամբ՝ պայմանավորված Ծառայությունում իր դիրքով, վերադասությամբ կամ պաշտոնով:

64. Ծառայողին արգելվում է օգտագործել թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, օգտագործել ոգելից խմիչքներ աշխատավայրում կամ ծառայողական պարտականությունները կատարելիս, ծխել աշխատանքի վայրում՝ բացառությամբ ծխելու համար սահմանված տարածքների, և խախտել հրդեհային անվտանգության և սանիտարական նորմերն ու կանոնները:

65. Ծառայողը պարտավոր է զերծ մնալ սեռական հետապնդման դրսևորումներից կամ նման տպավորություն ստեղծելուց՝ աշխատանքային հարաբերություններում, աշխատավայրում կամ մասնավոր կյանքում:

66. Ծառայողին արգելվում է մոլախաղեր կազմակերպելը կամ դրան մասնակցելը:

ԳԼՈՒԽ 8
ՀԱՐԳԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ

67. Ծառայողը պարտավոր է հավատարիմ լինել երդմանը, հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը, օրհներգը, նաև՝

պետական լեզուն, ինչպես նաև Ծառայության խորհրդանիշը, դրոշը, ստորաբաժանումների խորհրդանիշ-դրոշակները (շտանդարտներ), պատվավոր դրոշները:

68. Ծառայողը պարտավոր է զերծ մնալ Ծառայությունում նախատեսված տարածքներում Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից, Ծառայության խորհրդանիշներից, օտարերկրյա պատվիրակությունների հետ հանդիպումների ընթացքում՝ այդ պետությունների պետական խորհրդանիշներից, միջազգային կառույցների հետ հանդիպումների ընթացքում՝ այդ կառույցների խորհրդանիշներից ու տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանիշի կամ տարբերանշանի ցուցադրումից:

69. Ծառայողը դրսևորում է հարգանք հրամանատարների (պետերի) և ավագների նկատմամբ, պահպանում է քաղաքավարության ու ծառայողական ողջույնի կանոնները, պահպանում է ծառայողական կարգապահությունը, որի կանոնները սահմանված են Փրկարարական ծառայության կանոնագրքում:

70. Ծառայողը գիտակցում է, որ իր յուրաքանչյուր արարք կամ վարքագիծ կարող է հասարակության գնահատմամբ վերագրվել Ծառայությանը: Այդ իմաստով Ծառայողը պարտավոր է իրեն արժանապատվությամբ պահել հասարակական վայրերում և անձնական, ընտանեկան միջավայրում, թույլ չտալ հասարակական կարգի խախտումներ և անվայել արարքներ, որոնք կարող են խաթարել Ծառայության նկատմամբ հանրային վստահությունը:

ԳԼՈՒԽ 9
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՎ

71. Ծառայողը հանրության հետ պաշտոնապես հաղորդակցվելիս, հարցազրույց տալիս, տեղեկատվություն տրամադրելիս հետևում է Ծառայության՝ հանրության հետ հաղորդակցության կանոններին, ռազմավարությանը, ուղենիշներին, ինչպես նաև տվյալ հարցի վերաբերյալ Ծառայության պաշտոնական դիրքորոշմանը:

72. Ծառայողը լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս դրսևորում է նրանց նկատմամբ բարեկիրթ վերաբերմունք, չի խախտում նրանց իրավունքները, չի կատարում լրագրողական գործունեությանը խոչընդոտող գործողություններ, դրսևորում է զսպվածություն լրագրողների հարցերին պատասխանելիս, հարգում է հանրության իրազեկմանն ուղղված զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը, ինչպես նաև իր իրավասության սահմաններում աջակցում է սահմանված կարգով հավաստի տեղեկություններ ստանալու հարցում:

73. Ծառայողը պարտավոր է լրատվամիջոցներով ու սոցիալական ցանցերում չտարածել տեղեկություններ, չկատարել գրառումներ, մեկնաբանություններ, որոնք կարող են նսեմացնել, արատավորել կամ այլ կերպ վնասել Ծառայության հանրային հեղինակությունը և Ծառայության կողմից իրականացվող քաղաքականությունը, ինչպես նաև կասկածի տակ առնել Ծառայողի կողմից իր լիազորությունների անաչառ ու պատշաճ կատարումը:

74. Ծառայողը պարտավոր է խուսափել սոցիալական մեդիայի օգտահաշիվներում անձնական բնույթի այնպիսի լուսանկարների, տեսագրությունների, ձայնագրությունների կամ այլ բովանդակության հրապարակումից, որոնք կարող են Ծառայությանը վարկաբեկող լուրերի տարածման պատճառ հանդիսանալ:

ԲԱԺԻՆ 5
ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 10
ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՉՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

75. Ծառայողը պարտավոր է չհրապարակել, այլ կերպ չհանրայնացնել ծառայողական լիազորությունների արդյունքում իրեն հասանելի դարձած կամ մատչելի պաշտոնեական, ոչ հրապարակային տեղեկությունները: Այս կանոնից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ նման տեղեկությունների հրապարակումը կատարվում է օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

76. Պաշտոնեական, ոչ հրապարակային տեղեկություններ են այնպիսի տեղեկությունները, որոնք հասանելի են դարձել Ծառայողին կամ Ծառայողի կողմից ձեռք են բերվել իր ծառայողական լիազորությունների իրականացման արդյունքում, և որոնց գաղտնիությունը կամ ոչ հրապարակային բնույթը սահմանված է օրենքով, այլ իրավական ակտերով, ստորաբաժանման ներքին իրավական ակտերով:

77. Պաշտոնեական տեղեկության հրապարակում է համարվում.

1) տեղեկության հրապարակելը ցանկացած հանրային հարթակում,
2) տեղեկության տրամադրելը կամ մատչելի դարձնելը այն անձին, ով չունի տվյալ տեղեկությունը ստանալու, տնօրինելու լիազորություն,
3) տեղեկության օգտագործումը անձնական կամ մասնավոր նպատակով:

78. Եթե Ծառայողին հայտնի է դարձել, որ ծառայողական բնույթի ոչ հրապարակային տեղեկությունը հասանելի է դարձել երրորդ անձի, ով լիազորված չի նման տեղեկության

տնօրինման համար, Ծառայողը այդ մասին անհապաղ տեղեկացնում է իր հրամանատարին (պետին) կամ Ծառայության պաշտոնատար անձին, ով իրավասու է այդ տեղեկության պահպանության համար:

79. Ծառայողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ու բարեխղճորեն մշակել և տնօրինել պաշտոնեական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված իր տնօրինության տակ հայտնված ոչ հրապարակային փաստաթղթերը, տվյալները, տեղեկությունները, գաղտնաբառերը: Պետական, ծառայողական կամ օրենքով սահմանված այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելու պարտականությունը գործում է նաև ծառայությունը դադարեցնելուց հետո:

80. Ծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ իր լիազորությունների կատարման հետ չառնչվող պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի տեղեկակիրներին, տեղեկություններին, գաղտնաբառերին կամ հատուկ պահպանվող տարածքներին հասանելիություն ստանալուն ուղղված քայլերի ձեռնարկումից, ինչպես նաև առանց օրենքով սահմանված կարգով թույլտվություն ստանալու նման տեղեկակիրների պատճենահանումից, ձայնագրումից, լուսանկարումից կամ տեսագրումից, հատուկ պահպանվող տարածքների լուսանկարահանումից կամ տեսագրումից:

81. Ծառայողը պարտավոր է իր ծառայողական, աշխատանքային պարտականություններից չբխող հետազոտություններում կամ աշխատություններում չօգտագործել այնպիսի տեղեկություններ, որոնք, թեև ենթակա են հրապարակման, սակայն դեռևս չեն հրապարակվել Ծառայության կողմից:

82. Ծառայողը պարտավոր է չհրապարակել օրենքով սահմանված դեպքերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության եզրակացության տվյալները, ինչպես նաև հարցազրույցների ընթացքում դրա հետ կապված հարցադրումները կատարել՝ առանց ուղղակիորեն հղում կատարելու եզրակացությանը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

ԳԼՈՒԽ 11
ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՐԵԽԻՂՃ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

83. Հանրային ռեսուրսներ են Ծառայության նյութատեխնիկական, ֆինանսական, տեղեկատվական, կապի միջոցները, ստորաբաժանումների գույքը՝ ըստ Փրկարարական ծառայության կանոնագրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ինչպես նաև հանրային այլ ռեսուրսները՝ ըստ Կանոնագրքի 10-րդ կետի 8-րդ ենթակետում:

84. Ծառայողը պարտավոր է Ծառայության հանրային ռեսուրսները օգտագործել բարեխղճորեն, որը ներառում է նաև Ծառայության ստորաբաժանումների գույքի պահպանումը, նախապատրաստումը, շահագործումը և այլ նույնանման գործողություններ, որոնք սահմանված են Փրկարարական ծառայության կանոնագրքում:

85. Ծառայողը Ծառայության հանրային ռեսուրսները, այդ թվում կրծքանշանները, անվանաքարտերը, վկայականները օգտագործում է բացառապես ծառայողական նպատակներով՝ ձեռնպահ մնալով այդ ռեսուրսները սեփական կամ այլոց շահերը բավարարելու նպատակով օգտագործելուց:

86. Ծառայողը պարտավոր է իր աշխատաժամանակը չօգտագործել իր պաշտոնեական լիազորություններից դուրս այլ գործողություններ կատարելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառելի նորմերին համապատասխան նման համաձայնություն է ձեռք բերվել վերադասի կամ ղեկավարի հետ: Նմանապես, Ծառայողը պարտավոր է այլ ծառայողների աշխատաժամանակը չօգտագործել սեփական շահերը բավարարելու կամ այլ անձնական նպատակներով:

87. Ծառայողները, ովքեր իրենց լիազորություններն իրականացնելիս օգտագործում են ռադիո, արբանյակային, գծային, շարժական և ազդանշանային կապի միջոցներ, համակարգչային սարքավորումներ ու ծրագրեր, առցանց համակարգեր, պետք է գործադրեն ջանքեր դրանց անվտանգությունը անօրինական միջամտությունից պաշտպանելու ուղղությամբ:

88. Ծառայողը պարտավոր է հետևել անվտանգության կրծքանշանների, բանալիների, գաղտնաբառերի, վկայականների և նմանատիպ այլ պարագաների օգտագործման օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված անվտանգութան կանոններին:

ԲԱԺԻՆ 6
ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 12
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

89. Ծառայողը պարտավոր է բացառել խտրականության ու անհանդուրժողականության դրսևորումը որևէ անձի, անձանց խմբի, կազմակերպության նկատմամբ՝ կապված սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային

փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

90. Ծառայողը պարտավոր է զերծ մնալ անձի կամ անձանց խմբի նկատմամբ հաղորդակցվելու ցանկացած եղանակով խտրականություն, անհանդուրժողականություն, ատելություն, թշնամություն սերմանող հրապարակային կամ ոչ հրապարակային հայտարարություններ կատարելուց՝ պայմանավորված անձի կամ անձանց խմբի՝ 89-րդ կանոնում սահմանված հատկանիշներով:

91. Ծառայողը պարտավոր է իր ծառայողական պարտականությունները իրականացնելիս, աշխատանքային հարաբերություններում, գործընկերների ու հրամանատարների (պետերի) հետ շփվելիս զերծ մնալ խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց:

92. Ծառայողը զերծ է մնում պաշտոնեական պարտականությունները կատարելիս հովանավորչության ցանկացած դրսևորումից, որն արտահայտվում է այլ անձանց կամ կազմակերպությունների համար արտոնություններ, նպաստավոր պայմաններ հայցելով, որոնք կարող են օբյեկտիվորեն անհավասար, խտրական պայմաններ ստեղծել այլոց համար:

ԳԼՈՒԽ 13
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՍՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ

93. Ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն, այդ թվում՝ հրապարակայնորեն չարտահայտել իր քաղաքական տեսակետները, ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել:

94. Ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չդրսևորել հովանավորչություն որևէ կուսակցության, քաղաքական կազմակերպության կամ շարժման նկատմամբ, որը, ի թիվս այլնի, ներառում է Ծառայության տարածքում և տեղեկատվական նյութերում կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ ցուցադրելը, ինչպես նաև որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ դեմ քարոզ իրականացնելը:

95. Ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չկատարել քաղաքական շահը սպասարկող քայլեր կամ ներգրավվել դրանց պաշտպանության մեջ, չկատարել նման գործունեության համար հանրային միջոցներ տրամադրելու պահանջները, ինչպես նաև նման պահանջներ չներկայացնել այլ Ծառայողների:

96. Ծառայողը պարտավոր է զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական

էջերում քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:

ԳԼՈՒԽ 14
ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆՈՒՅԹԻ ԴԵՊՔԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

97. Ծառայողը պարտավոր է վերադաս հրամանատարին (պետին) պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հաղորդում ներկայացնել կոռուպցիոն բնույթի դեպքերի, շահերի առերևույթ բախման իրավիճակների, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, Օրենքով սահմանված հայտարարագրման կանոնների առերևույթ խախտումների մասին:

98. Ծառայողը պարտավոր է պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հաղորդում ներկայացնել իր կամ իր հրամանատարի (պետի) կողմից թույլ տրված առերևույթ խախտումների, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնաբերված այլ խախտումների վերաբերյալ, որոնք սահմանված են կանոն 92-ում: Իր կողմից թույլ տրված խախտումների վերաբերյալ Ծառայողը հաղորդում է ներկայացնում իր հրամանատարին (պետին), իսկ իր հրամանատարի (պետի) կողմից թույլ տրված առերևույթ խախտումների վերաբերյալ՝ վերջինիս վերադասին:

99. Ծառայողը պարտավոր է իր հրամանատարին (պետին) պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել իր գործառույթներով պայմանավորված՝ երրորդ անձանց կողմից ցանկացած օգուտ կամ առավելություն տալու առաջարկի բոլոր դեպքերի վերաբերյալ:

100. Ծառայողները պարտավոր են հարգալից վերաբերմունք դրսևորել խախտումների մասին հաղորդում ներկայացրած ծառայողների և այլ անձանց նկատմամբ, ձեռնպահ մնալ նրանց արատավորելուց, հետապնդելուց, հանրային պարսավանքի ենթարկելուց կամ այլ կերպ նրանց արժանապատվությունը վիրավորելուց:

ԲԱԺԻՆ 7
ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍԵԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

101. Ծառայողը, իր աշխատանքի որակը բարձրացնելու նպատակով, բաց է նորարարության նկատմամբ, շարունակաբար դիտարկում է իր ոլորտին վերաբերելի ներպետական ու միջազգային լավագույն փորձը, հետևում է միջազգային և տարածաշրջանային զարգացումներին, և փորձում է դրանք ներմուծել իր աշխատանքում՝ որպես կիրառման ենթակա հնարավոր պրակտիկաներ:

102. Ծառայողը գործադրում է ջանքեր Ծառայության ոլորտին վերաբերելի առկա մարտահրավերները վեր հանելու և դրանց հաղթահարման ուղիներ գտնելու ուղղությամբ՝ մյուս ծառայողների, հանրային իշխանության այլ մարմինների, հանրային քննարկումների և հանրության հետ համագործակցության միջոցով:

103. Ծառայողը աշխատավայրում ստեղծում է աշխատանքային բարոյահոգեբանական բարենպաստ և առողջ միջավայր՝ ծառայողական պարտականությունների առավել արդյունավետ կատարման համար:

104. Ծառայողը անհրաժեշտության դեպքում գործընկերներին ներգրավում է իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացներում, նրանց հնարավորություն է տալիս արտահայտել կարծիք, դիրքորոշում խնդրո առարկա հարցերի վերաբերյալ:

105. Ծառայողը բարեխղճորեն կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իր բոլոր ֆինանսական պարտականությունները՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների կատարումը:

106. Ծառայողը մասնավոր ֆինանսական գործարքներ կնքելիս պետք է հավաստիանա, որ իր մասնավոր գործարքների արդյունքում Ծառայության հեղինակությունը և գործունեությունը վնաս չի կրի:

107. Ծառայողը պաշտոնից ազատվելուց առաջ պատրաստակամ է իր փոխարեն նշանակված ծառայողին փոխանցել իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների ընթացքում ձևավորված ինստիտուցիոնալ հիշողությունը:

108. Ծառայողը այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ Ծառայությունից ազատվելու դեպքում աշխատանքից ազատման դիմումում նշում է տեղեկություն նոր աշխատավայրի մասին:

109. Ծառայողը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները պետական համակարգչային համակարգերը, սարքավորումները, ծրագրերը, ինչպես նաև Ծառայության տարածքներն անվտանգության հնարավոր սպառնալիքներից պաշտպանելու համար:

110. Ծառայողը խրախուսում է կոռուպցիոն բնույթի դեպքերի և այլ խախտումների մասին հաղորդում ներկայացնելը և նման վարքագծով օրինակ է ծառայում մյուս Ծառայողների համար:

Ծառայողը նաև քայլեր է ձեռնարկում՝ իր ենթակայության տակ գտնվող Ծառայողների կողմից կոռուպցիոն ռիսկեր պարունակող վարքագիծ թույլ չտալու նպատակով: